

ԴՐՈՒԱԳ Է. Նուաճել Լեւոնի գազգային աւագս

Ա. Հեթում տէր Լամբրունի

Որ այնքան վրէժխնդիր էր իրաւանց թոռնէին, եւ այնքան երկար ամս եւ ընդ այնքանեաց վեհից եւ հզօրաց մաքառեցաւ եւ ժուժկալեաց, չիք երկբայել եթէ առաւել եւս նախանձախնդիր էր իւրում սեփական տէրութեանն, զոր այնքան ճարտարութեամբ եւ խորագիտութեամբ ստացաւ. եւ ոչ իմիք խնայէր 'ի հաստատութիւն նորին, կամ առ աներկեւան առնել զնոյն հաստատութիւն. եւ յայսմ՝ առաւել քան յարտաքնոցն՝ 'ի ներքնոց անտի յազգային իշխանաց ունէր խէթ կասկածանաց, թերեւս առաւելագանց եւ ոչ միշտ արդարակշիռ: Առաջին յայսպիսեաց էր Լամբրունեան պայազատութիւն Հեթմեանց ազնիւ տոհմի, երիցագունի քան զիւր Ռուբինեանցն՝ յերկրիս Կիլիկիոյ: Բերդն այն ամուր՝ սարաւանդեալ յառաջին գահս Տաւրոսի՝ խոչընդակն եղեւ միշտ որդոց Ռուբինի, եւ թուէր իմն ընդդիմամարտ արձանացեալ նորակառոյցն Սսոյ: Ծանօթ են որչափ ինչ արարին հօրեղբարք իւր եւ եղբայրն եւ ինքն իսկ Լեւոն՝ մինչ չեւ էր պայազատեալ՝ հակառակ Լամբրունի եւ Լամբրունեանց, եւ ոչ կարացին երբէք 'ի բուռն առնուլ զամբոցն զայն՝ եւ յետ երկար պաշարմանց. ապա կամաւ եւ ակամայ զիջանէին 'ի հաշտութիւն խաղաղութեան. այսպէս երեւի եւ 'ի ժամանակի պարոնութեանն Լեւոնի. քանզի եւ 'ի հանդիսի թագաւորօրհնէիցն՝ ընդ այլ պարոնայս եկեալ էին 'ի պատիւ՝ երկոքին եղբարք Ս. Ներսիսի, տեարքն Լամբրունի եւ Լուլուայ: Առաջինն՝ *Հեթում*՝ անդրանիկ պայազատ տոհմին եւ տէր պանծալի ամբոցին, ազգական իսկ էր Լեւոնի, թոռն գոլով 'ի մօրէ հօրեղբօր նորին, պատուեալ 'ի Յունաց սեքաստոսութեամբ, պատուականագոյն եւս զգօնութեամբն եւ պերճութեամբ. յոր յաւելեալ եւ սրբազան շուք շնորհաշատ հարազատին իւրոյ՝ արքեպիսկոպոսին Տարսնի՝ 'ի խաղաղութեան զնա յապահովէր, նաեւ 'ի վերանալն Լեւոնի յարքայական աթոռ. այլ այն ինչ փոխեցաւ Սուրբն 'ի կենացս, փոխեցան եւ պայմանք քաղաքավարութեան երկոցուն՝ պայազատացս, թագաւորին եւ բերդատեառնն: Ոչ գիտեմ եթէ ե՞տ ինչ սա պատճառս խիթալոյ, եթէ լոկ առ